ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

<u>ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</u>

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2022/38, 29.03.2022թ.

Շտկման ամսաթիվը՝ 31.03.2022թ.

Բողոք բերող անձ՝ «ՏԻԳՄԱՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ

Պատվիրատու՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/13»

Գնման առարկան՝ թվային լուսանկարչական ապարատների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/13» ծածկագրերով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 24.03.2022թ. թիվ 2 արձանագրությամբ «ՏԻԳՄԱՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ որոշումը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ֆ. ՄԱՆԳՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման

ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձին
Բողոքաբեր՝
«ՏԻԳՄԱՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ից
գրանցման համար՝ 282.110.830897
հասցե՝ ք.Երևան, Մոլդովական 20/40
ներկայացուցիչ Հարություն Օհանյան
նույնականացման քարտի տվյալներ՝ 011778511,
տրված 09.08.2021թ.-ին, 004-ի կողմից
Պատվիրատու՝
ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմ,
հասցե Մարշալ Բաղրամյան 19
ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/13
թվային լուսանկարչական ապարատներ

ԲՈՂՈՔ

I. Բողոքի համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները .

11.03.2022.-ին ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմն (այսուհետ՝ Պատվիրատու) www.eauction.armeps.am էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ Էլեկտրոնային համակարգ) միջոցով հայտարարել է թիվ ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/13 ծածկագրով աճուրդ (այսուհետ՝ Ընթացակարգ): Ընթացակարգի հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 22.03.2022թ.-ին:

«ՏԻԳՄԱՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ (այսուհետ՝ Ընկերություն) մասնակցել է Ընթացակարգին և ներկայացրել է հայտ (այսուհետ՝ Հայտ): Ընկերությունը եղել է Ընթացակարգի միակ մասնակիցը:

Ընկերությունը Հայտով ներկայացրել է հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, այդ թվում իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը:

Ընկերությունը Հայտում ներառված բոլոր փաստաթղթերը հաստատել է էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Սակայն 24.03.2022թ.-ի ժամը 10:45-ի նիստով գնահատող հանձնաժողովը Ընկերության հայտը մերժել է պատճառաբանելով, որ Հայտով ներկայացված հրավերի հավելված 1.2 հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

III. Բողոքի հիմքերն ու հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են

հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4.3 կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության համաձայն՝ «4.3 Մասնակիցը հայտով ներկայացնում է՝

«ե) իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն հավելված 1.2-ի կամ 1.3-ի (ներկայացված հայտարարագրի ձևին համապատասխան); Ընդ որում՝

- 1.2 հավելվածը ներկայացնում է այն մասնակիցը, որը «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձ չէ կամ այդպիսի իրավաբանական անձ է սակայն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ պարտավոր չէր իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցել իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները:

-1.3 հավելվածը ներկայացնում է այն մասնակիցը, որը «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձ է և հայտը ներկայացնելու օրվա դրությամբ սահմանված կարգով պետք է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցված լիներ իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները. (...):

Ընթացակարգի հրավերի 8.19 կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ (...):

Ինչպես երևում է սույն գործի փաստերից՝ Ընկերությունը Հայտով ներկայացրել է իր կողմից լրացված և էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված հրավերով պահանջվող՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր: Սակայն հաշվի չառնելով այդ հանգամանքը Պատվիրատուն Ընկերության հայտը մերժել է պատճառաբանելով, որ Ընկերության կողմից ներկայացված հավելված 1.2 (իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը) հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Նշյալից կարող ենք արձանագրել, որ Ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացված որոշումն ոչ իրավաչափ է, քանի որ Հայտով ներկայացված հավելված 1.2 ստորագրված լինելու պայմաններում՝ Հայտը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ հավելված 1.2 էլեկտրոնային թվային ստորագրված չէ:

Ելնելով վերոգրյալից և առաջնորդվելով Օրենքի 46-րդ և 50-րդ հոդվածներով.

խնդրում ենք՝

- պարտավորեցնել թիվ ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/13 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնել թիվ 2 արձանագրությամբ «ՏԻԳՄԱՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ 24.03.2022թ.-ի որոշումը:

ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Հարգելի՛ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ,

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին մասով նախատեսված են կայացած գնման ընթացակարգերի շրջանակներում բողոք ներկայացնելու ժամկետներ: Սակայն նույն օրենքում բացակայում է մեկ մասնակից ունեցող և չկայացած հայտարարված գնման ընթացակարգերի շրջանակներում բողոք ներկայացնելու ժամկետները: Որպիսի հանգամանքներում մասնակիցն իրենից անկախ հանգամանքների բերումով կարող է զրկվել գնման ընթացակարգը Օրենքով սահմանված կարգով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մոտ բողոքարկելու իրավունքից: Ելնելով նշյալից կարծում ենք, որ այս պայմաններում անհրաժեշտ է կիրառել օրենքի անալոգիա, այն է՝ մեկ մասնակից ունեցող և չկայացած հայտարարված գնման ընթացակարգերի շրջանակներում ներկայացված բողոքները համարել սահմանված ժամկետում ներկայացված, եթե դրանք ներկայացվել են գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը տեղեկագրում հրապարակելու օրվան հաջորդող հինգ կամ տաս օրացույցային օրվա ընթացքում՝ կախված գնման ընթացակարգի տեսակից: Բացի այդ, Պետական գնումների մասին վերանայված համաձայնագրի XVIII հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր մատակարարի պետք է տրամադրվի բավարար ժամանակահատված բողոքը պատրաստելու և ներկայացնելու համար, որը ոչ մի դեպքում չպետք է լինի 10 օրից պակաս՝ հաշվված այն օրվանից, երբ մատակարարին հայտնի է դարձել կամ ողջամտորեն պետք է հայտնի դառնար բողոքի հիմքը:

Ինչպես երևում է սույն գործից՝ աճուրդի ընթացակարգով կազմակերպված թիվ ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/13 ծածկագրով չկայացած հայտարարված գնման ընթացակարգի միակ մասնակիցն էր «ՏԻԳՄԱՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն իսկ Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը տեղեկագրում հրապարակվել է 24.03.2022թ.-ին: Ուստի ելնելով վերոգրյալից խնդրում ենք՝

Ընկերությանն ընձեռնել Օրենքով սահմանված բողոքարկման իրավունքը իրացնելու հնարավորություն և սույն բողոքը ընդունել վարույթ:

Կից ներկայացնում ենք,

- Ներկայացուցչի լիազորագիրը և անձը հաստատող փաստաթղթի արտատպումները բնօրինակներից:
- Բողոքի վճարի վերաբերյալ փաստաթղթի պատճենը:
- Թիվ ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/13 ծածկագրով գնման ընթացակարգի թիվ 2 արձանագրության պատճենը:
- Ընկերության կողմից հաստատված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրերը:

«ՏԻԳՄԱՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի

ներկայացուցիչ Հարություն Օհանյան

Digitally signed by OHANYAN HARUTYUN 4009830433